

Վասն Երուսաղէմի Գինիշեան Բարեսիրական Յանձնախմբին

*15 Յունուար 2006
Երուսաղէմ*

Նման սփիւրքահայ շատ մը գաղութներու Երուսաղէմն ալ ունեցած է բախտաւորութիւնը 1975-էն ի վեր իր յարկի տակ ունենաու Գինիշեան Բարեսիրական հիմնարկութեան Երուսաղէմի մասնաճիւղը որն հաւասարապէս կը ներկայացնէ Սաղիմահայ գաղութի կազմակերպչական բոլոր մարմինները:

Յանձնախումբը որպէս գլխաւոր առաջնահերթութիւն բաց կը պահէ Ս. Յակովբեանց վանքէ ներս «Գինիշեան» անուան տակ գործող դարմանատունը, բժիշկի մը ու հիւանդապահուիի մը օրական 4 ժամեայ պաշտօնավարութեանը:

Տարիներու ընթացքին, շրջանիս աւելին վատթարացող տնտեսական թէ ընկերային պայմաններուն համընթաց, Գինիշեան Յանձնախումբը իր ծառայողութեան դաշտը ընդարձակեց ու նիւթական յատկացումներու թէ փոխանցումներու ընթացք տուաւ յատկապէս բժշկական առողջական թէ տնային նորոգութեանց կախք ունեցող գրեթէ բոլոր դիմողաց:

Այսուամենայնիւ, վերջին 10ամեակի ընթացքին «Գինիշեան» Յանձնախումբը իր պատասխանատութեան յանձնառու իր ուշշաղկութիւնը նաեւ կեդրոնացուց Երուսաղէմի գաղութի մէջ գործող հայ միութեանց վրայ որոնք այսօր իրենց գոյութեան օրհասական պայքարը կը մղեն դիմագրաւելով նաեւ նիւթական անհատնում դժուարութիւններ որպէս անմիջական առդիւնք ընդհանրապէս գաղութին դիմագրաւած դժուարութեանց:

Առդարեւ այսօր Գինիշեան Յանձնախումբը միջին հաշուով տարեկան \$2500 փոխանցում կիրականացնէ ամէն մի Հայ միութեան նաեւ մեզ Հ.Մ.Ը.Մ.ին:

Այսօր 2006 Տարւոյ դիմաւորման շրջանին զուգահեռ ստացանք \$1200 արժողութեամբ «չէք» որուն համար կու գանք փոխանցելու համակ Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքի թէ վարչութեան շնորհակալութիւնը եւ առաւել նոյն ամանորի ուրախ առթիւ կու գանք փոխանցելու մեր սրտաբուխ բարեմաղթութիւնները Գինիշեան Յանձնախումբին ու բոլոր անոնց որոնք Գինիշեանի ջահը վառ կը պահեն: